Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՓԵՏՐՎԱՐ 1 1892 Թիւ 3

ՀԱՅԿ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՕՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Ազգին մահացու պակասութիւնը.- Կեդրոնական յանձնախումբ.- Նամակ Կ. Պոլսէն.- Նամակ Կ. Պոլսէն.- Նամակ Պաթումէն.- Նամակ Կ. Պոլսէն.- Ամերիկեան քարք.- Քիւրտերի Գինի Խմելը.- Մարզարան.- Քաղաքական լուրեր.- Ազգային, Տեղական և զանազան լուրեր։

ՀԱՅ ԱԶԳԻՆ ՄԱՀԱՑՈՒ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆ

Ա.

«ՄՇԱԿ»ի Դեկտ. 7 թիւն ընաիր առաջնորդող մի կը բերէ մեզ, յորում հայ անհատն կը գովուի իբրև ընդունակ մարդ, իսկ հայ ազգն կը ցուցուի իբրև խեղճ հաւաքական մարմին՝ անընդունակ կեդրոնացման և հանրային գործառնութեան։

«Իւրաքանչիւր Հայ ջոկ վերցած» կ'ըսէ Արծրունի «լինի դա զինուորական, բժիշկ, երգիչ, նկարիչ, գրող, փաստաբան, պրոֆէսոր, վաճառական և այլն, օտար շրջանի մէջ տեղափոխուելով,— իր անհատական ընդունակութիւններով ոչ թէ միայն կը մրցի օտար արհեստակիցների հետ, բայց և ամենապատուաւոր տեղ կը գրաւէ իր արտակարգ ընդունակութիւնով օտար շրջանում։ Բայց հէնց որ նոյն ընդունակ անհատները իրանց հայրենիքում, իրանց նեղ շրջանում կը հաւաքվեն և կ'ուզենան միասին, հաւաքական ոյժերով գործել իրանց հասարակութեան օգտին, կը սկսեն հիմնել դպրոցներ, ընկերակցութիւններ, ընդհանուր հաստատութիւններ, այլ և այլ բարենպատակ ընկերութիւններ,— անմիջապէս երևան կը գան դժգոհութիւններ, կիրք, անհամերաշխութիւն, նախանձ, թշնամութիւն, իրար վնասելու, իրար ոչնչացնելու ցանկութիւն, հանրային գործ ընդհանուր միահամուռ ոյժերով առաջ տանելու անընդունակութիւն, ինտրիգաններ, խառնակութիւններ, անկարգութիւններ և այլն... այդ ճշմարտութեան վրա թող լաւ մտածեն մեր հասարակաց գործիչները։»

Արդարև ահաւոր ճշմարտութիւն մ'է ա[illegible] հայ վերայ «ՄՇԱԿ» կը հրաւիրէ հանրային գործիչներն։

Եւ մեք երեք տարի առաջ ճիշդ նոյն իմաստի վերայ թերթի մի մէջ գրելով կ'ըսէինք.— «Թէ հայ անհատն սքանչելի բարեմասնութիւններ ունի, աշխատասիրութիւն, պարկեշտութիւն, իմացողութիւն, տոկունութիւն և ընտանեկան սէր, այնմ բոլոր աշխարհ կը վկայէ։»

«Հայ անհատն ընդհանրապէս յառաջդիմութեան ընդունակ է և դարուն պահանջմանց հետ ի հաւասարութիւն գալու կը յաջողի։ Աշխատասէր մշակ, վարպետ արհեստաւոր, ճարտար արուեստագէտ, ընտիր բժիշկ, հմուտ փաստաբան, պերճախօս քարոզիչ, խոր քաղաքագէտ և մեծ գօրավար կը լինի Հայն։ Սակայն սա ևս անուրանալի, թէև ողբալի, իրողութիւն մ'է թէ հայ անհատներն միութիւններ յօրինելու մեծ կարողութիւն չունին։ Առանձին առանձին կը յաջողին, բայց երբ կը փորձեն գործակցիլ, կը վրիպին յաճախ...։»

Բ

Մեր ազգին այս ազնտարեր պակասութեան մեկնութիւնն այժմ փնտռենք։ Ինչո՞ւ Հայերն առաւել քան ուրիշ բազում ժողովուրդներ մէջ են պառատկման։

Գլխաւոր պատճառներն կը գտնեմք Հայոց քաղաքական վիճակին մէջ։ Նոքա դարերէ իվեր հպատակ ժողովուրդ մ'եղած են, Տաճկաստանի մէջ նոքա իբրեւ ստրուկ գործածուած են տիրող ցեղին կողմանէ։ Զինուորական ասպարէզն բոլորովին փակուած է նոցա դէմ, հետևապէս չեն կարացած զինուորական այլևայլ ստիճաններ և պատիւներ վայելել։ Քաղաքային շրջանին մէջ ևս նոքա դատաւոր, տեղական, կառավարիչ կամ կուսակալ չեն կրցած լինիլ։ Մայրաքաղաքում ինչ ինչ դարձր դիրքեր գրաւած են Հայք ոմանք, գլխաւորապէս դիւանագիտական շրջանում, վասնզի Հայերն առաւել ծանօթ գտնուած են Եւրոպայի լեզուաց և վիճակին քան Թուրքք, բայց այդպիսի պաշտօնեայք բացառութիւն եղած են, և միշտ Թուրքերու ստորակայ դրից մէջ դգուշութեամբ դրուած։

Հայերն այսպէս երկրին քաղաքային և զինուորական ստիճաններէն զրկուած լինելով, ի՞նչ կը մնայ իրենց բնական փառասիրութիւն և բարձրանալու իղձն յաղեցուցանելու ծառայող.— կրօնական ստիճան, և արուեստից ու ազատական ասպարէզներու մէջ գերազանց հանդիսանալով տեսակ մի բարոյական հեղինակութիւն ունենալու հնարաւորութիւն։

Եկեղեցականին բանձրագոյն փառասիրութիւն է Պատրիարք կամ Կաթողիկոս լինել։

Եկեղեցական աստիճանէն դուրս կը մնայ միայն բարոյական մեծութեան ասպարէզը· մեծ պիտի լինի Հայն իբրև նկարիչ, բանաստեղծ, պերճախօս, ուսուցիչ, գրող և այլն։

Եթէ օտար լեզուաւ և օտար միջավայրում մեծանայ, կրնայ խաղաղ մնալ· բայց խնդիրն ազգային շրջանում մեծ լինելու վրայ է, և հոն է որ դժուարութիւն և անհաճոյ բաներ յառաջ կուգան, և սա կերպով յառաջ կուգան. — Կարող և խելացի մարդիկ բաղդատաբար շատ են, բայց դոցա ամենուն համար տեղ չկայ· ուստի և ասպարէզի անձկութեան պատճառաւ իրարու կը չփուին, իրարու կը զարնուին։

Ասպարէզի անձկութենէն շատ Հայեր ստիպուած են ազգային շրջանէն ելնել, Հայրենիքէն հեռանալ· այսպիսիք օտար երկիրներու մէջ յաճախ կրցած են բարձրանալ և մեծանալ։ Բայց հայրենի շրջանում մնացելոց համար տակաւին կարի անձուկ է ասպարէզն։

Գ

Սակայն ասպարէզի անձկութիւնն, կարող մարդոց չափազանց մեծ թուոյ մի՝ մի և նոյն գծերու վրայէն ընթանալու հարկն բաւական չէ լիովին բացատրելու մեր զիրար ոչնչացնելու բաղձանքն, մեր պառակտումներն և գծուծ հակառակութիւններն։ Կայ ուրիշ ազդեցութիւն մ՚ևս ի հաշիւ առնլու։

Մեք հպատակ եղած եմք օտար ցեղի մի և այլակրօն իշխանութեան մի· այդ ինքնին տկարացուցիչ է արդէն։ բայց դժբաղդաբար այն կառավարութիւն որոյ լուծըն ընդունած եմք, եղած է հոմանիշ զեղծ բռնապետութեան· և այս ոչ միայն տկարացուցած այլ և անբարոյացուցած է զմեր ազգ։

Բացատրենք։

Օսմանեան փառապանծ գահուն վրայ բազմող Սուլթաններն գիտակից լինելով թէ մեծ տէրութեան մի պետն և մեծ մարգարէի մի յաջորդն են, արբեցած լինելով իրենց յաղթութեամբք և կեղծաւոր ծառայից շողոքորթութեամբք, բացարձակ ինքնակալութեան բոլոր իրաւունքներն ի գործ դրած են անօրինակ խստութեամբ։ Սուլթաններն ահաւոր եղած են իրենց հետ անմիջական յարաբերութիւն ունեցող նախարարաց և բարձրաստիճան պաշտօնէից· և սոքա ալ ահաւոր եղած են իրենց ստորակայից· այսպէս վեհապետէն ցյետին զապթիէն։ Քաղաքային և զինուորական պաշտօնէից խստութեան օրինակն բովանդակ երկրին մէջ տիրած է, և ամէն հարուստ, ամեն պէկ, մինչև իսկ ամեն ընտանիքի հայր փոքրիկ բռնաւոր մ՚եղած է իւր շրջանին մէջ։

Մեծ և փոքր բռնաւորներու այս բազմութեան ազդեցութիւնն ի՞նչ եղած կրնար լինիլ տաճկահայոց վրայ։ Ի հարկէ սոքա ևս բռնաւոր, ահաւոր, հրամայող լինելու բաղձանք զգացած են։ Հայ չորպաճին թուրք Աղային դերն կատարած է իւր ազդեցութեան շրջանում· Թրքական վեհանձնութեամբ մի Թրքական ինչ ինչ սովորութիւններ օրինակած է, ինչպէս կնոջմէն և զաւակներէն զատ նստիլ և առանձին կերակուր ուտելու սովորութիւնն· Թրքական զեղծ բարքեր առած է, ինչպէս խաթեր համար անիրաւ բարեկամին թէր ելնելու վատթար բարքն։

Հարկ է խոստովանիլ թէ Հայ վարժապետն իւր բրով և ֆալախայով, Հայ առաջնորդն իւր գաւազանաւ և մտրակաւ, Հայ պատրիարքն իւր միջոցներով, նոյն ինքըն հայ հայրն իւր ապտակներով ջանացած են լինիլ ահաւոր, ազդել առաւել քան պատկառանք։ Ամեն Հայ նման է յայսմ Թրքին. — պատիւ և փառք կը համարի սարսափելի լինելն։ Բռնապետութիւնն թափանցած է ցծուծ Հայուն ոսկերաց։

Բայց թուրք և հայ բռնապետութեան միջև տարբերութիւններ կան։ Թուրքն իւր բռնապետ միտման յագուրդ կուտայ ե՛ւ Թրքաց ե՛ւ Հայոց վրայ բռնանալով· Հայն միայն Հայուն վրայ բռնանալ կրնայ։

Ուրիշ տարբերութիւն։ Թուրքն իշխանութիւն ունի· քաղաքային և զինուորական թուրք պաշտօնեայք օրինական միջոցներ ունին տուգանք, բանտ, աքսոր, կախաղան վճռելու յիրաւի կամ յանիրաւի, և այսպէս կը պահպանեն և կ՚աճեցունեն իրենց ահաւորութիւն։ Թըրքին բռնաւորութիւնն կը ծագի և կը սնանի իւր օրինական իշխանութենէն· Հայուն բռնապետութիւնն թրքական օրինակէն իրեն ներշնչուած է և միայն այնպիսի միջոցներու կրթնած է որք բոլորովին անբաւական են իւր ահաւորութիւն իրական և շօշափելի ընելու։

Այս պատճառաւ Հայն ստիպուած է կա՛մ Թրքին օգնութեան դիմել որ նա օրինական միջոցներով նեցուկ լինի իրեն, կա՛մ բարոյական — կամ թէ բունք անբարոյական — միջոցներ գործածել վախցունելու, հարուածելու, տկարացնելու համար իւր համազգի հակառակորդներն. — կը բամբասէ, կը զրպարտէ, կը դաւէ, կը մատնէ ըստ տեղւոյն։

Մեր մէջ շատեր թուրք բռնաւոր ոգիէն թափանցուած են, և այն ոգւով կը վարուին առանց լիովին գիտակից լինելու։

Եթէ ոք իբրև ազգային գործիչ նշանաւոր դիրքի հասած է, կ՚ուզէ որ բոլորք զինքն անվիճելի հեղինակութիւն ճանաչեն· եթէ անկեղծ և բարեկամական ոգւով խորհուրդ տրուի նմա, կը վիրաւորի· եթէ անձնական խորհրդոյ և անկախ բնաւորութեան տէր երևի իրեն համակրողաց մին, դժպհի կը լինի իրեն· այպայման հպատակութիւն, պատկառոտ հետևողութիւն երաշխաւորող բնաւորութիւններով միայն ինքզինք շրջապատել կ՚ուզէ։ Ահա գլուխներն և կուսակցութիւններն բազմապատկելու ընտիր միջոց։

Դ

Բացարձակ միապետութիւնն դրութիւն մ՚ է ուր միապետին կամքն ի վեր է քան զօրէնս։ Ամեն պաշտօնեայ չափով մի հաղորդ է միապետին այս կամայականութեան, քանի որ նորա փոխանորդն կամ փոխանորդին փոխանորդն է։ Այս պատճառաւ երկրին օրէնքներըն ապահով ապաստանարան չեն ընծայեր ժողովրդեան· ապահով ապաւէնն է պաշտօնէից բարեհաճութիւնն։ Այսպէս բացարձակութեան բնական մէկ պտուղըն, որ այնքան կը լնու զՏաճկաստան, է այն զոր Օսմանցիք խաթր բառով կը բացատրեն։ Խաթրը ահագին դեր կը կատարէ անդ, ամեն բանի մէջ։ Եւ ի՞նչ է խաթր. — Երբ նուէրներով, շողոքորթութեամբ կամ իրական ծառայութեամբ պզտիկն հաճելի կը դառնայ մեծին, մեծին սրտին մէջ այն զգացում կը ծագի թէ պէտք է ի դիպելառթին վարձատրել զփոքրն պաշտպանելով զնա, օգնելով նըմա բարոյապէս. — պաշտպանելով ո՛չ անպատճառ անիրաւութեան դէմ, այլ պաշտպանելով արդար հակառակորդի դէմ իսկ. և օգնելով նմա հասնիլ պաշտօնի, ոչ միշտ այն պաշտօնին որուն արժանի է փոքրն, այլ որուն կը բաղձայ։

Հայեր ապրելով ուր խաթրն այնքան կը տիրէ մեծէն դէպ ի փոքրն և հաւասարէն առ հաւասար յարաբերութեանց մէջ, ողբալի կերպիւ ազդեցուած են։ Հայերն ալ Թրքաց պէս, թէև ոչ բոլորովին նոցա չափ խաթրի նուաստ սկզբան կը ծառայեն։ Ընթերցողք թիւր չըմբռնեն մեր միտք։ Խաթրն կրնայ օրինաւոր լինիլ, և ամեն երկրի մէջ ևս ի հարկէ կը զգացուի· բայց օսմանեան խաթրն ախտաւոր, չափազանցեալ տեսակ մ՚է, և Հայերն ալ այդ ախտաւոր խաթրի զօրութենէն բռնուած են։ Յաճախ խաթրն մեր մէջ կը յաղթէ կամ յաղթել կը ջանայ արդարութեան, ճշմարտութեան և օրինաւորութեան։

Դիցուք թէ ընկերութեան մի պաշտօնէից ընտրութիւն պիտի կատարուի։ Առաւել քան մէկ հոգի ընդհանրապէս կը գտնուին ընկերութեան ատենապետ լինելու փոքր ի շատէ յարմարութիւն ունեցող, և եթէ

անդամոց բաղձանքն լինի որոշել թէ ո՞վ է արժանաւորագոյնն, դիւրաւ կ'որոշուի խնդիրն։ Բայց Խաթրն մէջ կը մտնէ. և թիկնածուն — այն որ նուազագոյն արժանիք ունի — անսպառ չողոքորթութեամբ իւր բարեկամաց Խաթրն կը սրէ։ Եւ ահա անհաճոյ և աւելորդ վէճեր, վիրաւորումներ։ Եթէ նուազ արժանաւորն չյաջողի պաշտօնի հասնիլ՝ ինքն և իւր Խաթրն փընտռողներն ոխ կը պահեն միւսներուն դէմ, և ընկերութեան մէջ այնուհետև յուզուող ամեն խնդրոյ մէջ իրենց խօսքերն, հաւանութիւնն կամ չհաւանութիւնն կախում կ'ունենայ ոչ փաստերու զօրութենէ այլ թէ ո՞ր կողմէն եկած է առաջարկն։ Եթէ չսիրուած կողմէն լաւ գործ կատարուած է, շնորհակալութեան խօսք ընել չեն ուզեր, և ոչ ալ կ'ուզեն լսել։ Աւելի կը սիրեն պարսաւի քուէ տալ։ Թող վիրաւորին ծառայութիւն մատուցանողներն և քաջուին։

Եթէ պաշտօնէից մէկուն կամ միւսին պաշտօնավարութիւնն քննադատուի, թէև առանց խստութեան՝ փափկութեամբ քննադատուի, պաշտօնեայն կը վիրաւորի. եթէ չէք հաւնիր կ'ըսէ, կը հրաժարիմ։ Մի թէ, կ'ըսէ, այդքան խաթր չունէի՞ որ ձայն չհանէին (կամ թէ թերութիւնս իրրև լաւութիւն հռչակէին։)

Եթէ ընկերութեան անուս և անփորձ մէկ անդամը բարձր և դժուարին պաշտօնի համար ընտրելի առաջարկող մի գտնուի — և նորա խաթրն փնտռող մի կը գտնուի որ առաջարկէ — Պարոնն չհաճիր բողոքել թէ ինքն անարժան, անկարող է, և թէ ընկերութեան շահուց վնասել է իրեն նման մէկն այդպիսի պաշտօնի կոչել։ Այսպէսով ուրիշ անդամ մի կը ստիպուի ելնել յայտարարել թէ Պարոնն անյարմար է։ Եւ ահա նորէն վիրաւորում, և ոխ, և անհաճոյ բաներ որք կը տեւեն տարիներ։

Ե

Բովանդակելով ինչ որ ցարդ յառաջ բերինք, կը ըսենք թէ այն բաղդատական անընդունակութիւն, զոր մեր ազգ հաւաքական ուժերով հանրային գործեր կատարելու մէջ կը ցուցնէ, արդիւնք է գլխաւորապէս օսմանեան բռնապետութեան ազդեցութեան։ Այդ բռնապետութիւն տկարացուցելով հանդերձ մեր ազգային բընաւորութիւն՝ հաղորդած է մեզ ահաւոր և հրամայող լինելու բաղձանք։

Օսմ. իշխանութեան ներքև շատ նիւթական չարիք, բաղում ֆիզիքական նախատինք կրած է մեր ազգ, բայց մեծագոյն չարիքն զոր կրած է նա տիրող ցեղին երեսէն, է այս բարոյական վնասն որ կը սպառնայ մեր ազգի բարոյական զօրութիւններն ոչնչացուցանել և գնա կազմակերպութեան անընդունակ ընել։

Երանի՜ թէ ազգին մէջ շատնային այն բանիբուն և ազատամիտ գործիչներ որք իրենց կեանքով և օրինակաւ բուժէին ժողովուրդն իւր թրքական ախտերէն, — սովրեցուցնէին նոցա ճշմարտութիւնն և արդարութիւնն ի վեր դասել քան բարեկամական խաթրն — սովրեցուցնէին նաև թէ ահաւոր լինիլ մեծ լինիլ չէ, այլ թէ անձնուէր ոգւով անցուցամոլ ծառայութիւն մատուցանելն է ճշմարիտ մեծութիւն։

Ազգն թրքական բռնապետութեան լծէն ազատելու աշխատութիւնն է արտաքին գործունէութիւն. ազգն թրքական մոլութիւններէ և զեղծումներէ բուժելու աշխատութիւնն է ներքին գործունէութիւն։

Արտաքին գործունէութեան նուիրեալ անձն թերեւս միանգամ թշնամիէն կը մեռցուի գընդակնահար. ներքին գործունէութեան նուիրեալն պատրաստ պէտք է լինի իւր իսկ ժողովրդէն խանչարի վէրքեր կըրելամէն օր—իւր կեանքն ամբողջ նահատակութիւն մ'է։

Վերջապէս, Հայե՛ր, մեր տնտեսական խմացական և Բարոյական յառաջդիմութիւնն անհնար պիտի մնայ ցորչափ մահմետական թրքի լուծն խորտակուած չլինի Հայոց պարանոցէն. անո՛ր համար է որ ինքնօրինութիւն կը խնդրեմք և զայն ձեռք բերելու պիտի ջանամք անդադար։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Ն.-Եորքի Հ. Հ. Յանձնախումբն հետեւեալ շրջաբերական նամակն կից ընդ կազմակերպութեան ծրագրին, յղեց Հայ Գաղթական Աշխարհի այլ և այլ ազգային ընկերութեանց, այն համոզմամբ թէ արդէն գոյ եղող ընկերութիւններ յարմար մարմիններ են տեղական գաղթականութեանց կամ գէթ իրենց ընկերութեան քննութեան ենթարկելու Ծրագիրն և միութեան կենսական խնդիրն։—

202W. 23d St.
Նիւ-Եորք

Մեծապատիւ Ատենապետ,

Յանձնախումբս պատիւ ունի յղել առ ձեզ զհետեւեալ Ծրագիր կազմակերպութեան, աղաչելով որ ձեր Ընկերակցութեան կամ Յանձնախմբին քննութեան ենթարկելով զայն՝ հաճիք հաղորդել մեզ ձեր դիտողութիւններ եւ թելադրութիւններ ի կատարելագործումն Ծրագրին, որպէս զի ըստ այնմ կարենամք տալ այնմ վերջնական ձեւն։

Մնամք,

Մեծ. Ատենապետ,
Խորին յարգանօք
Ի դիմաց Նիւ-Եորքի Հ. Հ. Յանձնախմբին

18 Յունվ. 1892

Ատենադպիր — Ատենապետ
Յ. Կ. ՀԻՒՐՄԻԶ — Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Կնիք Յանձնախմբին։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

8 Յունվար 92 Կ. Պոլիս

Բարեկամ,

92 թուականին առաջին թղթակցութիւնս բարեաւ սկսած ըլլալու համար մխիթարական բանով մը ըսկսիլ կ'ուզեմ այս անգամ։ Գալիթեան որբանոցին հիմնարկութեան 25դ տարեդարձն տօնեցինք ի Խասգիւղ, և հիմնադիր Սրբուհւոյ յիշատակն օրհնեցինք, կամ, առ լաւագոյն ասել, նորա օրհնեալ յիշատակն օրհնեց զմեզ, օրհնեց զմեր ազգ։ Նորա յիշատակն մին է այն հպարտագիւտ յիշատակաց, որք ժողովրդի մը հաւատ, յոյս և սէր կը ներշնչեն։

Սրբուհին, ոչ միայն անուամբ այլ սրտիւ սրբուհին, գեղեցիկ հոգի մը կը կրէր ի գեղեցիկ մարմնի. երկաթէ կամք մը՝ ոսկի սրտի հետ։ Նորա սիրտ հարիւր մայրերու սրտից չափ մեծ էր, և նորայ սիրոյ լայնաբաց բազուկներ բաւական էին հինգ հարիւր որբեր ընդգրկելու։

Մայրապետն եղաւ կանանց մէջ ինչ որ հայրապետ մ'է հայրերու մէջ։ Սրբուհին թափառեցաւ որպէս զի որբերն չմնային. ոքնեցաւ, որպէս զի որբեր քնանան. արտասուեց որբոց բազմութիւն մը ժպտեցնելու համար, և իրօք իւր արտասուք քար սրտերն հալեցնելու հրաշագան զօրութիւնն ունեցաւ։ Ահա այսպիսի հրաշքներու, այսպիսի հրաշագործներու կարօտ է մեր հէգ Ազգ, Սուրբերու և Սրբուհիներու որք անհնարին հրնարաւոր գործեն...։

Եորկի անուն սճրագործ մը ցկեանս աքսորման դատապարտուեցաւ անցեալ օր. նորա ահաւոր սճիրն էր այն զի..., գուշակեցէք,... վնասակար լրագիր մը վերայէն գտնուած էր։

Ի՞նչպէս ալ վնասակար լրագիրներն կը գտնեն, կը ճանչնան և զայն կրող անձն կը պատժեն ըստ արդ-

ժանւոյն․ Փնտռակար Լրագի՛ր կոել, այդ աւելի դէշ է քան խմնչեար կամ թուր կոել։ Վախեմ թէ Նազըմ Պէյի լրտեսններն այնքան յառաջ երթան դաղտնի բաներ տեսնելու կարողութեան մէջ մինչեւ թափանցել նաեւ ի խորս սրտից․ այն ատեն վա՜յ անոնց ալ որոց բերան ներբողներով լեցուն է Բ․ Դրան հայրախնամ կառավարութեան համար, և որոց սիրտ․․․

Կե՛ա գրի նորէն․ վա՜յ անօրինին։ Կը մտնեմ թէ կեանք ղնելն արգիլեալ է յօղուած գրողաց։ Երանի՛ թէ ես այս չար սովորութիւնն չունենայի։ Երբեմն կեանքս թափանցիկ քօղին ներքեւ վտանգաւոր խորհուրդներ կը ծածկուին․ և յաճախ քօղն ծածկեալ խորհըրդոյն յատուկ գոյնն ուժգնացնելու կը ծառայէ։

Անկեղծօրէն զղջալով վերի կեանքուն մասին, կը բաղձամ յայտնապէս ըսել։ Գալիլէոս իւր դատաւորաց առջեւ երկիրն հաստատ կը մնայ ըսելէ յետոյ՝ ցած ձայնով յաւելած է «եւ սակայն կը դառնայ։» Մեր բարեխնամ կառավարութիւնն ներբողողներն ալ ցած ձայնով գոնէ յաւելուած մ՚ընելու վախնալով, միայն մօք, ի խորս սրտի կ՚ըսեն «սակայն և այնպէս․․․» և չեն յանդգնիր աւարտել խորհրդածութիւնն մութ սրտի մութ անկիւնիւմ գոնէ։

Ըսել է Նազըմ Պէյի թափանցողութիւնն շատ գընահատուած է մեր մէջ։ Գնահատուած է նաև Նորին վեհափառութենէն, որ բարեհաճեցաւ Վսեմափայլ Պէյին կուրծքն փայլեցուցանե՛լ Նիազամի սակի չքադրամն։

Նոյն Վսեմափայլին շնորհիւ է նաեւ որ մայրաքաղաքում և ի շրջակայս այնքան բաղդատական անդորրութիւն կը տիրէ, այնքան քիչ ոճիրք, աւազակութիւնք, գողութիւնք, առեւանգմունք տեղի կ՚ունենան։ Վկա՛յ Թուրք Լրագիրը, որ անցեալ օր կ՚ըսէր թէ ի Բերա, Սագըզ Աղաճում, տասն օրուան մէջ մի քանի գողութեան դէպքեր պատահած են։ Եւ անոնք որ քերականութիւն կարդացած են, գիտեն որ մի քանին շատ չէ, յոգնակի չէ, թէեւ յոգնակի է։

Այլ անօրինութիւն։ Գաւառներէն ով որ գայ օթեվանի խաներու և հիւրանոցներու մէջ, նորա անուն, ժամանման և մեկնման թուականներն մասնաւոր թղթի վրայ նշանակուելով պիտի հաղորդուին ում անկ է։

Ըսէ՛ք անաչառօրէն, միթէ ակեղբամն շա՞ս է Նազըմ Պէյի։

Կեցցէ՛ Սահմանադրութիւն։

Մեք, բարեկամ, այնքան խեղճ ենք որ կարծենք թէ կեցցէ՛ գոռալով կ՚ապրի Սահմանադրութիւն։ Մեր բոլոր մեծ ու փոքր, առաջնակարգ, երկրորդակարգ եւ վերջնակարգ բանաստեղծներ մէկ մէկ երկուական երգերով ներբողեցին զԱզգային Սահմանադրութիւն։ Եւ սակայն Սահմանադրութիւն թղթի վրայ յօրինել, Պետութենէն վաւերացնել տալ, երգել և ներբողել բաւական չեն Ազգն սահմանադրական ընելու։ Սահմանադրութեան ոգին ըմբռնել, սիրել պէտք է․ գաւառացւոց բաւական մէկ մասն Սահմանադրութեան տառն ալ չըճանաչեր։ Բայց մայրաքաղա՛քն, պիտի ըսէք, մանաւանդ Բերայի Հայ հասարակութիւնն, ուր այնքան լուսաւորութիւն, այնքան բանիմացութիւն կայ։ Ո՛չ բարեկամ, ձեր յոյս ցնորական է։ Եւ ահա ապացոյց։— Բերայի Թաղական Խորհուրդն 11 տարիէ ի վեր պաշտօն կը վարէր թէեւ ժողովրդեան քուէիւք ընտրուած չէր։ Անցեալ օր Սրուանձտեանց եպիսկոպոսն, Պատրիարք Սրբազանի հրահանգին համեմատ, Բերայի ազգայիններն ի ժողով հրաւիրեց, և ամեն ինչ այնպէս կարգադրուեցաւ, այնպէս եղաւ որ փոխանակ սահմանադրութեան տրամադրութեան համաձայնօրէն ընտրութիւն կատարելու, նախկին Թաղական Խորհրդոյ պաշտօնավարութեան շարունակումն միաձայնութեամբ խնդրեցին ներկայք։

Պատրիարքին բարեհաճութեամբն, Ստեփան Փաշայի Ջանիկն, Նուբեան Էֆէնտի իւր ընտրած անդամոց ատենապետն կը մնայ, և Սահմանադրութիւնն սանակոխ կը լինի նոյն ինքն Բերայի՛ մէջ,-Ազգին մեծագոյն կեդրոնին յառաջդիմագոյն Թաղի՛ն մէջ։

Եթէ ազգին բարձրագոյն, ընտրելագոյն Թաղն ալ տակաւին արժանի չէ ազատ քուէիւք ընտրելու իւր Թաղական Խորհուրդ, ընտրելու զՆուբեան Էֆ․ և նորա պաշտօնակիցներն նորէն եթէ արժանի են, ընտրելու ուրիշներն եթէ սոքա չեն արժանի, ալ ի՞նչ կը փնտռենք, ալ ի՞նչ բանի վերայ կը պարծինք, ալ ի՞նչ ծաղրելի ինքնախաբութիւն է կեցցէ՛ Սահմանադրութիւն պօռալ, ալ ի՞նչ խեղկատակութիւն է Պատրիարքէն պահանջել որ ի գահ պատրիարքական բազմելու օրն հաւատարմութիւն երդնու Սահմանադրութեան։

Ալ ի՞նչ կը պարծինք թէ մեք եմք միակ սահմանադրական ժողովուրդն յԱրեւելս։ Բա՛ռ բա՛ռ բա՛ռ։

ԱՆԵՐԵՒՈՅԹՆ

ՆԱՄԱԿ Կ․ ՊՈԼՍԷՆ

Պրն․․․ը անցեալներ հոս հասեր է Ամերիկայէն․ և անցագիր չունենալով՝ բանտարկուած է։ Արդէն կուրծքը սաստիկ պաղեցուցեր է եղեր, և հիմա վիճակը աւելի ծանրացած ըլլալով՝ հիւանդանոց ղրկած են անօթի ծարաւ։ Նաև իւր քով ասկէ գրուած նամակներ ալ հըպատակելով խըթխըթաքի քաշած են, եւ ուրիշներու ալ գլխուն փորձանքի առիթ եղած է։ Վերջապէս երկու օր առաջ քէֆիլով հանուեցաւ և․․․․ տարին, բայց ցաւալի է ըսել որ յոյս չկայ, վասնզի թոքախտի դարձուցեր է, և գուցէ ամիս մը չափ կեանք ունենայ։ Տէրը իր ծնողքներուն համբերութիւն պարգեւէ։ Եթէ հայ տղաք առանց Ամերիկայի հպատակ լինելու հոս դառնան, կը բանտարկուին։ Վրանին կամ սնտուկնին ձեռագիր ըլլալու չէ, մէյ մէկ բան պատճառանք բռնելով կը բանտարկեն, նեղութիւններ կուտան և տուգանք կ՚առնեն։

Խարբերդի մէջ, չգիտենք որու մատնութեամբ, տուն մը մէջ սնտուկ մը գտած է կառավարութիւնը, և սնտուկին մէջ 10 տարի առաջ գրուած ձեռագիրներ, որոնք իբրեւ անվնաս կամ անգործածելի պաթթալը նետուած են եղեր։ Ազգասիրական ոտանաւոր կամ ե՞րգ գտեր են ձեռագիրներուն մէջ, ի՞նչ են գտեր, հեղինակներն կամ ընդօրինակողներն բանտարկեցին․ մէկը Պատ․ Մ․ Շմաւոնեանն է, միւսը նորա տղան է, եւ երրորդն ալ Ակնցի երիտասարդ մը որ Խարբերդի Գոլէճին մէջ 10 տարի առաջ աշակերտ է եղեր։

ՄԵՂՐԻԿ

Վերի նամակում յիշուած երիտասարդն որ Ամերիկայէն գնացած է վերջերս, այս երկրին մէջ ազգային եւ քաղաքական գործերու կամ ժողովներու խառնուող մէկն չէր։ Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։

ԽՄԲ․

ՆԱՄԱԿ ՊԱԹՈՒՄԷՆ

Պաթում, 31 Դեկտ․ 91,

Տաճկահայաստանի ռուս և պարսկական սահմանագլխոց վրայ շատ դէպքեր կը պատահին, կռիւներ գրեթէ անպակաս են։ Աւազակային յարձակումներ կը լինին երկուստեք, Հայերու և Քուրդ ու Թուրքերու մէջտեղ։ Քրդեր եւ Տաճիկներ աւելի կորուստներ կունենան, սակայն կառավարութիւնը չպարպեր և անգէտ կը ձեւանայ, զի եթէ յայտնելու լինի, Թուրք ժողովուրդն ալ պիտի յուզուի։ Ինձ ծանօթ զարգացած հայ յեղափոխ մը որ դիւրութիւններ ունի սահմանը երբեմն անցնելու— և ինքը փախստական լինելով կը փնտռուի Տաճ․ կառավարութիւնից— մի ամիս առաջ հոս եկաւ, և բաւական

տեղեկութիւններ սուտ սահմանագլխի հայ ժողովրդեան վիճակին և խարհուրդներուն մասին. մէկ խօսքով անոտոյգ դրութեան մէջ են։

Աղաշկերտի և Պայազիտի մէջ գտնուող առեւտրականներու շատեր կամ բանտն են իբր յեղափոխ ձերբակալուած, կամ փախստական անցած են սահմանն։ Ասոնցմէ շատեր թէև ընչեղ են իրենց հայրենիքը, բայց այսօր ասա անդ կը թափառին անձուկ վիճակ մը ունենալով, և յուսահատ կ'ապրին, և չեն կրնար յայտնի վերադառնալ իրենց ընտանեաց քով։

Եթէ Կ. Պոլսոյ Պատրիարքն շունենայ կորով և չը-կարենայ Սուլթանից ընդհանուր ներում ձեռք բերել, յառաջիկայ դարուն այս փախստականներ պիտի հարկադրուին վերջին յուսահատութեամբ մեռնել և մեռնիլ. այսօր 6-700 բանտարկեալներ կան (յեղափոխներ, Տաճիկը Ֆէտայի կը կոչէ եղեր,) Կարնոյ, Մշոյ Վանայ, և Պեյազիտի բանտերը. 7-800 անձեր ալ կան փախստական, ասոնք ժողովրդեան մէջ ձայն ունեցողներ և զարգացածներն են։

Քանի օր առաջ Թոփրակ Գալէի կողմն սահմանագլուխ երկու հայ գիւղացւոց և Քրդայ մէջ ընդհարում տեղի ունեցեր է, սակայն ստոյգ եղելութիւնը դեռ չը-կարողացայ իմանալ։ Սահմանագլխի Հայոց Նիստու կացը բոլորովին խանգարուած է. Տաճիկ կառավարութիւնը աչք ու ականջ է դարձեր։

ՓԱԽ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 8 Յունվար, 92

Պոլսոյ գործեր այս տարի աննման կերպով գէշ կ-ին և ձախող։ Մանկութիւնք մի զկնի միոյ եկին և հանրային անվստահութիւն յառաջ բերին. նոյն վիճակն գըրեթէ կը շարունակէ դեռ, գուցէ տարիներ պէտք լինին վստահութեան առաջի ատիճանն վերահաստատելու համար։ Ամեն մարդու աչք վախցաւ. մանաւանդ որ այս դէպքեր հպօրապէս ապացուցին թէ Թուրքիոյ մէջ իրական դրամագլուխը խիստ քիչ է, այլ վարկի զօրութեամբ կը դառնան գործերն, այնպէս որ եթէ վարկ ու վստահութիւն ոչ է պատճառաւ հարուածուին, բոլոր գործեր կրնան խոպառ կանգ առնուլ,— ոչ միայն վաճառականական եւ սեղանաւորական դասուց այլ եւ ամեն կարգի արհեստաւորաց կամ էնաֆի գործեռն։

Եւրոպական մեծ գործատոյներ մեծագումար վարկ բացած են միշտ Պոլսոյ վստահելի եւ նշանաւոր վաճառականաց, սոքա ալ գաւառացի գոմիսիոնճիներու և վաճառականաց ապառիկ կուտան. նորը առնուլ եւ հինը տալու դրութեամբ կը շարունակուի։ Այս ընթացքով միլիոնաւոր լիրաներ Թուրքիացին միշտ պարտի Եւրոպացւոյն, և այս է կ'ըսեն դաղանիքն (փարձառու և մեծ մարդոց կարծիքն է զոր առած եմ) որ Թուրքիոյ մէջ դեռ դրամ կը գտնուի։

Պոլսոյ մէջ 100 ին 40ը ինֆլիւէնցայով հիւանդ են այս միջոցիս, թէև շատ ծանր չէ Եւրոպայի նման։

ԳՈՐԾԻ ՄԱՐԴ ՄԸ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԺԸՐ

ԳԼԽՈՒ ՑԱՒՈՒ ԴԱՐՄԱՆ

Զուիցերիայի օրիորդ մի,որ 12 տարիէ ի վեր մինուէն կոչուած գլխացաւէ կը նեղուէր, ինձ դիմեց երկու տարի առաջ։ Իւր անցելոյն պատմութենէն տեղեկացայ թէ ի Թիֆլիս վարժուհի եղած է Փռանսերէնի, և թէ՛ անդ թէ՛ ի Զուիցերիա դեղք և դարմանք անօգուտ եղած են իրեն։ «Ցորմէ հետէ Ամերիկա եկած էք,» հարցի դարման չփորձեցի՞ք։» — «Ի՞նչպէս չէ. մինչև իսկ բնազանցական դարմանն փորձեցի։» — Եւ պատմեց թէ կին բժշկի մի դիմած է, և ըստ պատուիրի բժշկուհւոյն՝ գնացած է զինքն տեսնել ճիշդ երբ գլխացաւն բռնած է։

Բժշկուհին, ըստ տարօրինակ եղանակին, կը ըսկըսի դարմանել հիւանդն։ Կարելի էր կոչել զնա փաստաբանուհի, վասն զի իւր դարման դեղով չէ, և ոչ ջրով, և ոչ ելեքտրականութեամբ, այլ փաստիւ։ — Կ'ասե՞ս թէ այժմ գլուխդ կը ցաւի։ — Այո, շատ սաստիկ։— Կը սխալիս, ի՞նչպէս կարելի է որ գլուխդ ցաւի. այդ գլուխդ որ Բարի Արարչին ստեղծածն է, մարմնոյդ վերայ դրուած չէ քեզ տանջելու համար, դու երևակայութեանդ զոհ եղած ես. գլուխդ ամենևին չցաւիր։

—Կը ցաւի՛, ի՞նչ կ'ըսէք դուք, ի՞նչ ըսել կ'ուզէք։ Գլուխս սաստիկ կը ցաւի։

—Պէտք է համոզուիք, օրիորդ, թէ ձեր գլուխ չցաւիր, վասնզի չկրնար ցաւիլ, ուրեմն չցաւիր. կը հասկնա՞ք փաստիս զօրութիւնն։ Դուք ուսեալ և ուշիմ էք, կը հասկնաք անշուշտ։ . . . Արդէն ձեր գլխու ցաւն փարատուելու վերայ է, արդէն մեղմացաւ զգալի կերպով, այնպէս չէ՞։

—Ընդ հակառակն, աւելի կը սաստկանայ ցաւն, ճշմարիտ աւելի գէշ կը ցաւի գլուխս քանի դուք կը խօսիք։

Օրիորդն օգուտ չքաղելով այս առաջին դարմանէն, երկրորդ անգամ մ'ալ կ'երթայ առ բժշկուհին երբ կը բռնէ ցաւն, եւ նորէն կը լսէ երկար փաստաբանութիւն առանց ոեւէ օգուտի։ Իւր ցաւէն ազատեցաւ իմ խնամոց տա հակահիրիտի գործածութեամբ իբր երեք ամիս։

Ըստ ամերիկեան բնազանցական բժշկութեան, նա որ դժմարտութիւն կամ ստամոքսային ցաւ ունի, պարտի աղօթել սա խմաստիւ։—

Ո՛վ Արարիչ, ես այսքան ժամանակ այնպէս կարծած և այնպէս ըսած եմ ուրիշներուն թէ ստամոքս կը ցաւի։ Ո՛հ, սխալած եմ, մոլորած եմ, մեղանչած եմ։ Իմ ստամոքս երբէք չէ ցաւած, և այժմ չցաւիր, և երբէք պիտի չցաւի։ Դու ինչ որ ստեղծեր ես, բարի է, և իմ ստամոքս և բոլոր մարմինս ազատ է յամենայն ցաւոց։ . . .

Ամերիկայ զարմանալի երկիր մ'է։ Ամեն անհեթեթ դրութիւն արմատ կը բռնէ ատ, և ամեն անհաւատալի բանի հաւատացողներ կը գտնուին։ Նմանաբուժութիւնն եւս աւելի ծագկեալ եւ յաջող է ատ քան ուրիշ ոեւէ երկրի մէջ։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՐԲԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Միանգամ անսովոր ախորժակով կ'ուտէ Mr. D., և ի վերայ ամենայնի կը յաւելու դժուարամարս փայ մի (կարկանդակ։) Շատ սիրելով փայն, երկրորդ կտոր մի և երրորդ կտոր մ'ալ կ'նդունի։ Շատ չտեւեր, ստամոքսն ահագին ցաւ կը բռնէ։ D. կը հասնի երկիւղալի վիճակի։ Բարեկամն կը հարցնէ թէ արդեօք մեռնելէն կը վախնա՞յ։ «Մեռնելէն չեմ վախնար,» կը պատասխանէ վեհանձն եանքին, «բայց շատ ուտելով մեռնելու կ'ամաչեմ։»

ՔԻՒՐՏԵՐԻ ԳԻՆԻ ԽՄԵԼԸ

Աչնիւ Խմբագիր «ՀԱՅՐ»ի

Ամենուս ալ ծանօթ է որ Տաճկաստանի փոքր վաճառականները Քրդերի հետ բարեկամ կ'ըլլան և անոնց լեռները կ'երթան ապրանք ծախել։

Յակոբ անուն Հայ մը այս կերպ առեւտրով բաւական հարստացած էր, երբ իր յաճախորդ Քրդերէն-ներեն միաբան խորհեցան գողնալ անոր ինչքը։ Գիշեր ատեն գնացին իրենց նպատակին հասնելու Յակոբ ի քուն

էր։ Քրդերն սնտուկներ բացած, և կողոպուտն հաւաքած պատրաստ էին դուրս ելնելու երբ իրենց ամենէն ադահ ընկերն բան մ'եւս գտաւ— կարաս մը գինի։ Ճաշակելով հառաչեց «չը թօյ խօշխյ.» եւ ընկերներն ալ կանչեց, և սկսան խմել «չը թօյ խօշխյ, չը թօյ խօշխյ» ըսելով— ի՜նչ անոյշ է, ի՜նչ անոյշ։

Շատ չտեւեր գինին կ'ըստիպէ մեր գողերն քրդերէն խաղ կանչելու։ Տան տիկին կ'արթննայ, տանտէր կ'արթննայ։ Ցակոբ կ'ելնէ կ'երթայ Քրդաց քով, որք կը փութան զինքն ալ հրաւիրել։ Կը տեսնէ եղած պատրաստութիւններն, և ինքն ալ Քրդերն կը հրաւիրէ պառկիլ քնանալու, ինչ որ գինով գողերն շուտով կը կատարեն. առաւօտուն արթննալով իրենց խայտառակ վիճակը կը տեսնեն և կը դառնան իրենց տեղերը։

Պատմութիւնս կը ցուցնէ թէ գինին Հայոց բարեկամն է ի Տաճկաստան։

Յունվ. 20, 92, Ն.-Եորք ԲԱԺԱՆՈՐԴԴ

Ծան.— Գինին Հայուն բարեկամ եղած է այդ դէպքին մէջ գոնէ հաւատարիմ չան մը չափ։ Շունն ինքն կը հաչէ, իսկ հայկական գինին Քրդերն ռնալ տուած է։

ԽՄԲ։

ՄԱՐԶԱՐԱՆ

Հետեւեալ ձեւերն կ'արատտպենք «ՄԱՐԶԱՐԱՆ»էն որ այս ամսոյ մէջ ի լոյս պիտի ընծայուի։



Ձև 24



Ձև 26

Ձև 25



Ձև 27

Ձև 10





Ձև 12

Ձև 9

Ձև 8





Ձև 11

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նուվօ Թան լրագիրն Քեամիլ Փաշայի անկման պատճառներուն վերայ հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ։ Ըստ ռուսական թերթին սապէս անցած են անցքն.—«Քեամիլ Փաշա իւր նախագահութեան ներքև գումարուած նախարարաց առաջարկեց խնդրել Սուլթանէն, իբրեւ անհրաժեշտ միջոց, օրինաւոր հռչակել Բուլղարիոյ Ֆերտինանդի իշխանութիւնն, և այսպէս միանգամ ընդ միշտ ազատել զԹուրքիա Պուլկարական խնդրէն, որ վըտանգաւոր խնդիր մ'է։ Օսման Փաշա, պատերազմական նախարար, դէմ ելաւ այս առաջարկութեան առարկելով թէ Թուրքիա պատրաստ չէր ինքզինք պաշտպանելու եթէ Ռուսիոյ հետ զարնուելու հարկն ծագէր։ Յայնժամ Քեամիլ Փաշա ցուցուց իւր պաշտօնակցաց Մեծին Բրիտանիոյ Կ. Պոլսոյ դեսպանատան գրաւոր մէկ յանձնառութիւնն որով անգղիական նաւատորմն պարտականութիւն կը ստանձնէր պաշտպանել Թուրքիոյ բոլոր ծովային սահմանագլուխներն, ինչպէս նաեւ Շէյխ իւլ Իսլամին մէկ Ֆէթվան որ հաւանութիւն կուտար այս բաղադրութեան։ Օսման Փաշա իսկոյն դիմեց Սուլթանին, և Քեամիլ Փաշայի նախարարութիւնն անկաւ հետեւեալօրն։ Ստոյգ ոչ ինչ գիտէ ոք Քեամիլի վիճակին վերայ, այլ կը հաստատեն Կ. Պոլսոյ թէ մեռած է նա։ Ոմանք ալ կը հաւաստեն թէ նա աքսորեալ է յԱսիա, և ընդունուած է յԱնգղիացւոց մերձ ի կղզին Քիոյի։

— Թրքական մաքսատան մէջ, ի Կ. Պոլիս, վար դըրուած են եւրոպական մի քանի հակ ապրանքներ— գորգեր, ներկուած թղթեր եւայլն— իբրև գրգռիչ և խռովարար իրեր։ Ցետոյ տրուած բացատրութենէն հասկցուած է թէ ապրանքներուն վերայ նկարուած էյֆէլեաշտարակին ներքև «ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն» բառերն են որ գրգռիչ և խռովարար բնութիւն կուտան ապրանքներուն։

Արդեօք այդ բառերն բառարաններէն ալ վերցնելու հրաման ե՞րբ պիտի տրուի

— Թուրք կառավարութիւնն նոր հրաման մի տուած է յԱնգղիա վեց քրուազէօռներու սահմանագլխոց պաշտպանութեան յատկացեալ։ Նոյնպէս կայսերական հրաման մի կ'արտօնէ զծովային նախարարութիւնն երկու մարտանաւ շինելու պողպատէ։

— Ինֆլուէնցան, որ սպաննեց նոր Խտիվին հայրն, կը թուի աւելի խստանալև տարածուիլ ընդ Եգիպտոս։ Բռնուածներու թւոյն մէջ են Մարէշալ Մուխթար Փաշան և Նուպար Փաշան։

— Թէհրանի մէջ շատ անգամ ամբոխն կը գոչէ եւ-ղեր «Անկցի Մեծ Վէզիրն» «Անկցի Սուլպըրի։» Ամէն օր Պարսիկք կը շրջապատեն Եւրոպացւոց տներն և կը պոռան թէ պէտք է իրենց երկրէն ելնեն։

— Յունվար 15ին, Պարսկաստանի մէջ (ի Բալաստաշ) ապստամբներուն և զօրաց միջև տեղի ունեցած մարտին մէջ 200 ապստամբք սպաննուեցան. իսկ զօրաց կորուստն էր 80 մեռեալ և 90 վիրաւոր։

— Նոր Խտիֆը, Ալպանի փոխարքայ, առաջին ընդունելութիւնն տուած է Ալպրին պալատանց մէջ, Յունվար18ին։ Նորին Բարձրապատուութիւնն կը կրէր եգիպտական բանակի զօրավարի զգեստն։ Նախարարութիւնն հրաժարական մատոյց, բայց Խտիֆը չընդունեց։

—Իշխան Ֆէրտինանտ շատ ուրախ եղաւ տեսնելով որ առաջին անգամ լինելով տէրութեանց ներկայացուցիչք պաշտօնապէս ներկայացան նմա Նոր Տարւոյ առթիւ։ Աւստրիոյ, Իտալիոյ, Անգղիոյ, Ռումանիոյ, Յունաստանի, Սերպիոյ և Թուրքիոյ ներկայացուցիչք երեւեցան պաշտօնապէս։

ԱԶԳԱՅԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԵՐ Ի ՌՈՒՍԻԱ. «Մեզ պատմում են,» կ՚ըսէ ՄՇԱԿ, «որ Թիֆլիզում մի խումբ հայ օրիորդներ և մի քանի երիտասարդներ միասին կազմակերպել են մի սեպհական ընտանեկան շրջան, որը շաբաթ օրերը հաւաքվում է սրա կամ նրա տունը. այդ տեղ օրիորդներն ու երիտասարդները միասին կարդում են հայերէն գրքեր։»

Նոյն թերթին կը գրեն Էջմիածնէն թէ հայ գիւղացու համար արդէն սովորութիւն է դարձեր զինուորագրութիւնը. զինուոր գնացող գիւղացին կը զգայ թէ քաղաքացիական պարտք մի կը կատարէ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգլիերէն տետր մ՚է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի։ Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու։ Անի քաղաքին աւերակաց մասին հետեւեալ տողերն կը գտնեմք «Ձայն»ի մէջ։--

«Շքեղ քաղաք մ՚էր հազար եկեղեցեօք, փառաւոր ապարանօք և հանրային շինուածովք, որոց աւերակք իսկ դեռ եւրոպացի այցելուաց սքանչանքն կը շարժեն, որք հայ հանճարի ծնունդն եղող ճարտարապետութեան մի գեղեցիկ տիպարն կը տեսնեն անդ։ . . . Կ. Ֆէրկիւսըն կ՚ըսէ իւր «Պատմութիւն Ճարտարապետութեան» գործոյն մէջ թէ Անիի աւերակաց մէջ մասեր կան Գոթական ոճն ներկայացնող՝ այդ ոճոյ Եւրոպայում երեւան գալէն դարեր առաջ։ Շառլ Թէքսիյէ, Ֆռանսացի ճանապարհորդ, կը տեղեկագրէ թէ տեսաւ ինքն յԱնի մատուռ մի սրբանուէր, որ աներկբայ մին է այդ ոճոյ քան զամենայն գեղեցիկ օրինակաց աշխարհի։ Ալֆրէտ Մօրի կ՚ըսէ Փարիզի Հնախօսական Հանդէսին մէջ, թէ Անւոյ հայկական ճարտարապետութիւնն յայտնապէս մայրն է ռուսականին։»

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

ՀԱՅԵՐ Ի ԹԵՀՐԱՆ --- ԱՐՁԱԳԱՆՔ թերթին ուղեալ թղթակցութենէ մի կը տեղեկանամք թէ Թէհրանի ազգայինք այս ձմեռ գրական երեկոյթներ կը վայելեն։ Առաջին երեկոյթը տուած են ուսուցիչք յօգուտ «Հայկազնեան» վարժարանի. դասախօսած են Պ. Աստմեան, Պ. Յակ. Ղազարեան, Ց. Խան Մ... և Հայր Գ. Անուշեան։ Երկրորդ երեկոյթն յօգուտ «Րաֆֆիի» ընկերութեան տրուած է, ուր խօսած են ուսուցիչք և Բս. Բաղչէլ (տենդի մասին։)

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ վերջին նստին մէջ պաշտօնէից ընտրութիւնք գաղտնի քուէարկութեամբ կատարուեցան, եւ արդիւնքն եղաւ առանց բացառութեան վերընտրութիւնն նախկին պաշտօնէից, այսինքն—

Ց. Թաւշանճեան— ատենապետ.
Ց. Հիւրմիւզ— փոխ-ատենապետ.
Հիւտավէրտի— ատենադպիր.
Իշխանեան— փոխ-ատենադպիր.
Արսէն— գանձապետ.
Տասրեան— գրապետ.
Մ. Ս. Գաբրիէլեան— կացմիչ կամ պետ Գործադիր Ժողովոյ։

Հայկական Միութեան կանոնագրութիւնն կը արտամադրէ Գործադիր Ժողովոյ համար ընտրել մէկ անձ, և սա իւր պաշտօնակիցներ ընտրելով կը կազմէ Գործադիր Ժողովը։

Մի տարի առաջ դեկտեմբերի 15-ին կատարուած ազգահամարից երեւում է որ Պետերբուրգի բնակիչների թիւը հասնում է 954,400 մարդու։ Ահա թէ ըստ մայրենի լեզուի և բարբառների ինչպէս են բաժնուած Պետերբուրգի ազգութիւնները. ռուս-829,714, գերմանացի-43,798, լեհացի-22,307. Ֆինլանդացի-16,734, Հըրէայ-10,353, էստօնացի-7,431 շվեդացի-472,4, լատիշ-3,525, Թուրք-3,471, Ֆրանսիացի-1,932, անգլիացի-1,884, հայ-485, վրացի-113, տաճիկ-91, պարսիկ-28, եւայլն։ 2,365 անձանց մայրենի լեզուի մասին անկարելի է եղած տեղեկութիւն ստանալ։ (ԱՐՁԱԳԱՆՔ)

— Այս վերջին օրերս Նիւ-Եորք հասնող գաղթականաց մէջ 23 հոգի անընդունելի գտնուած են ըստ օրինի և յետս պիտի խրկուին զիրենք բերող նաւերուն մէջ դրուելով։

— Պրուքլինցի երիտասարդ լրագրող մի երկկնութեան յանցանօք երեք տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ։

ԽԱԲՈՒԱԾ ՀԱՅԵՐ

«Պանքա Իթալիանա» կոչուած ընկերութիւն մի, ի230 Mulberry st. Ն.-Եորք, առկէ մի քանի շաբաթ առաջ իբր 20 Հայեր ի Տրէյթըն յղած է չահաւոր գործ խոստանալով։— Մեր հայրենակիցք չարաչար խաբուած կը գտնեն իրենք զիրենք երբ փորձով կը տեսնեն թէ փոխանակ երկու թալէռ աւուրչէքի, որպէս խոստացուած էր իրենց, հազիւ 30 սէնթ կ՚ընդունին, ինչ որ ոգեպահիկ պարէնի ալ բաւական չէ։ Միւս կողմէն գործն սաստիկ ծանր է և տեղւոյն օդն չափազանց անհանդուրժելի։ Ջգել գալ կ՚ուզեն, բայց զիրենք վարձող Իտալացիք զարնելու վիրաւորելու սպառնալեօք կը պահեն և կ՚աշխատցնեն մերոնք իբրև ստրուկ։

Խնդիրն Հայկական Միութեան ներկայացուեցաւ Յունվ. 30ի նստին մէջ, և անդ գոհութեամբ ծանուցուեցաւ վերջնագոյն լուրն թէ արդէն այդ 24 Հայեր ազատած են Ընկերութեան ձեռքէն՝ հետեւեալ կերպիւ։ Ն. Եորքի Հայերէն ոմանք թղթակցութեամբ իրաց վիճակն Ջարլաթընի կառավարութեան հաղորդած լինելով, կառավարութիւնն քննութիւններ կատարած է, և Հայերն թելադրութեան մի անսալով, գործադուլ ըրած են երկու օր, պահանջելով որ գործատէրն հաց տայ իրենց. երկու օր անգործ և անհաց մնացած են. յետոյ վերստին սկսած են աշխատիլ։ Վերջապէս նորէն ուզած են --միշտ թելադրեալ լինելով-- թողուլ գործն։ Երբ գործատիրոջ մարդիկն զինուք կը սպառնան և չփոթութիւն կը ծագի, ահա հեծեալ ոստիկաններ վրայ կը հասնին, և հայերն վերջնականապէս ազատ կը կացուցանեն։

Այդ Հայերու ի Նիւ Եորք վերադարձին համար ես խորհեցաւ Հայկական Միութիւնն, և գոհութեամբ տեղեկացաւ թէ իւրաքանչիւրի ճամբու ծախքն 11 թալեռէ մինչև 4ի գեղջելու համոզուած է երկաթուղւոյ ընկերութիւնն, շնորհիւ միջնորդութեան Հայոց ոմանց։ Միութեան անդամներէն Տր. Այվազեան ազգասիրաբար ստանձնեց հաւաքել մինչև 40 թալէռ եթէ այդ Հայերու ոմանք այլապէս չկարենան հայթայթել ծախքն, և օժանդակել նոցա վերադարձին։

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՑ ԼԷԳԻՈՆ ՅԱՄԵՐԻԿԱ

Շահեկան է գիտնալ թէ որքան Հայեր այժմ կ'ուսանին Միացեալ Նահանգաց այլ և այլ կրթական հաստատութեանց մէջ։ Կ'երևի թէ այս երկրի հայ ուսանողներ աւելի բազմաթիւ են քան ուրիշ ոևէ իցէ օտար աշխարհի՝ առանձին առած։ Զուիցերիոյ ժըվէն քաղաքի մէջ հայ ուսանողաց թիւն է 16, որպէս կը տեղեկանամք «ՄՇԱԿ»էն, որոց երեքն օրիորդ են, և այս երեքի մէջէն երկուքն բժշկութիւն կ'ուսանին։ «ԱՐՁԱԳԱՆՔ»ի ուղղեալ փարիզեան թղթակցութիւն մի ութ հայ ուսանողներու կողմանէ գրուած է, որ անշուշտ Փարիզի մէջ ուսանող Հայերու ամբողջ թիւն չներկայացուներ։ ՆՈՐԴԱՐ կը ծանուցանէ թէ Իտալիայում սովորող չորս երգիչ ունիմք այժմ— Շահլամեանց, Ամէրջանեանց, Ծովակ եւ Վարդիկեան։

Այս տարի Ամերիկայում ուսանող Հայերն, որքան կարացինք տեղեկանալ, են հետևեալք։—

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Աստուրեան Հայկ,	ի Հարթֆըրտ
Գասպարեան Գասպար	,,
Սարիաւազեան Յարութիւն	,,
Գաղանճեան Գեւորգ	ի Նիւ Հէյվըն
Խնկեան Թորոս	ի Շիքակոյ
Մանաւեան	,,
Մենազար Փիլիպպոսեան	յԱնտովըր
Պէշկէօթիւրեան Վահան	յՕպըրն
Գամպուրեան Ստեփան	,,
Բարունակեան Մարկոս	ի Մէտիսըն
Աստալեան	յԱնտովըր
Շիրէճեան	ի Փրինսթըն
Աբրահամեան Սարգիս	ի Պէնկոր
Թամզարեան Վահան	ի Սինսինատի
Եգեկիելեան Դաւիթ	Մուտիի Ինսթիթիւթի մէջ
Կարապետեան Արշակ	,, ,, ,,

ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Բագրատունի	ի Ֆիլատէլֆիա
Հեճինեան Արամ	ի Շիքակոյ
Եգեկիէլեան Սենեքերիմ	,,
Մխիթարեան Աստուր	,,
Մարտանեան Սարգիս	ի Սէն Լուի
Սարգիսեան	ի Նիւ Եորք

Մաթէոսեան Հրանտ կ'ուսանի ատամնաբուժութիւն ի Ֆիլատէլֆիա

ԶԱՆԱԶԱՆ ՃԻՒՂԵՐՈՒՄ

Քէպապեան կ'ուսանի գիտութիւն ի Նիւ Հէյվըն։ Սելեան կ'ուսանի երկրագործութիւն ի Վերմոնթ։ Սանդիկեան Մամաս կ'ուսանի փիլիսոփայութիւն ի Վերմոնթ։ Օր. Իշխանեան կ'ուսանի Քինսըր Կարտընի դրութեամբ մանկավարժութիւն ի Նիւ Եորք։

Փոլոնէլ Ֆիքսի հաշուով Եւրոպական պետութեանց այժմու բանակն, ի խաղաղութեան՝ է 3 միլիոն ու կէս մարդ, ի պատերազմի՝ հաշուելով առաջին, երկրորդ և երրորդ գծերու այժերն, ընդ ամենայն 27 միլիոն զինուոր։ Յաւել 1500 մարտանաւ։

Միւս կողմանէ կը հաշուի թէ 1830-ին Եորոպայում կայր 316 հազարամեթր երկաթուղի. 1890-ին 220 հազար հազարամեթր կայ, և յԱմերիկա՝ 250 հազար հազարամեթր։

1789-ին Մարսիլիայէն ի Փարիզ 13-ժրէն կ'երթզուէր, այժմ՝ 16 ժամէն։

— Պուլկարիոյ նախարարապետ Սթամպուլոֆի ընդունած գնդակն կ'երևի թէ մահացու չպիտի լինի, ըստ տեղեկագրութեան վիէննացի վիրաբուժի մի։ Գնդակն դուրս հանելու չպիտի ջանան առ այժմ։

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ տարական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worc ster, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան։

ՄՇԱԿ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի շաբաթն երեք անգամ։ Տարեկան բաժնեգինը է 10 ռուբլի։ Հասցէն

Redaction du Journal «Mschak» Tiflis, RUSSIE

ԱՐՁԱԳԱՆՔ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի շաբաթն երեք անգամ նոյնպէս ի Թիֆլիս։ Տարեկան բաժնեգինն է 10 ռուբլի։

ԱՂԲԻՒՐ ամսագիրն և ՏԱՐԱԶ շաբաթաթերթն կը հրատարակուին նոյն ուղղութեամբ և ծրագրով, երկուքն ալ պատկերազարդ և կրթական հրատարակութիւններ են։ «Աղբիւր»ի տարեկան բաժնեգինն է 4 ռուբլի, Տարազինն՝ 7։ Կը հրատարակուին ի Թիֆլիս։

Ով որ երկու թերթերուն եւս բաժանորդ լինի, կ'ընդունի մէկ տարուան մէջ 51 պատկեր իբր պրէմիա։

ՆՈՐ ԴԱՐ

Քաղաքական—գրականական ամենօրեայ թերթ, կը հրատարակուի Թիֆլիսում։ Տարեկանն է 10 ռուբլի։ Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանք։

— «ՀԱՅԿ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԷՐՔ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ա. ԴԱԲԻԼԵԱՆ